**Խորհրդի նախագահ**
Սոնա Մկրտչյան — ծնվել է 1995 թվականին Հայաստանում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է համալսարան՝ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի բաժին, որտեղ ստացել է բակալավրի աստիճան: Այնուհետև շարունակել է կրթությունը մագիստրատուրայում՝ Software Engineering մասնագիտությամբ:
Մասնագիտական կարիերան սկսել է որպես C++ ծրագրավորող: Աշխատանքի ընթացքում ձեռք է բերել ծրագրավորման, համակարգերի նախագծման և տեխնիկական խնդիրների լուծման խորքային փորձ: Զուգահեռաբար զբաղվել է նաև դասավանդմամբ՝ փոխանցելով ծրագրավորման գիտելիքները ուսանողներին և սկսնակ մասնագետներին:
Հետագայում իր գործունեությունը տեղափոխել է բիզնես ոլորտ՝ համադրելով տեխնիկական մտածողությունը կառավարման և ձեռնարկատիրական հմտությունների հետ:

**Խորհրդի անդամ - Տնօրեն**
Արման Վլադիկի Հարությունյան — ծնվել է 1979 թվականի ապրիլի 5-ին:
1986–1996 թվականներին սովորել է Երևանի թիվ 92 միջնակարգ դպրոցում: 1996–2000 թվականներին ուսանել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝ ստանալով բարձրագույն կրթություն:
Մասնագիտական գործունեությունը սկսել է բիզնես ոլորտում և երկար տարիներ զբաղվում է ձեռնարկատիրությամբ ու կառավարչական գործունեությամբ:
2002 թվականից հանդիսանում է «Ջոլի Ֆեմիլի» ՍՊԸ-ի տնօրեն:
2018 թվականից՝ «Ֆրի Սթայլ» ՍՊԸ-ի տնօրեն:
2025 թվականից նաև «Վի Առ Էյչ» ՍՊԸ-ի տնօրենն է:
Արմանը ունի բազմամյա փորձ բիզնեսի կառավարման, ընկերությունների զարգացման և ռազմավարական ղեկավարման ոլորտներում:

**Խորհրդի անդամ**
Չոհրակ Բենիամինի Անտոնյան՝ ծնվել է 18.01.1980թ-ին Նոր Հաճըն ավանում: 1986-1997թթ սովորել է Նոր Հաճընի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1997-2001թթ սովորել է՝ Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանի՝ Մեքենաշինության և սարքաշինոպթյան դեպարտամենտում ստացել բակալավրի որակարում: 2001-2003թթ ծառայել է ՀՀ ԶՈՒ- ում: 2015-2021թթ աշխատել է ՝ ՀՀ ԱՆ Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ում . վարչատնտեսական մասի փոխտնօրեն: 2024թ-ից զբաղվում է ձեռնարկատիրությամբ: Ամուսնացած է ունի երեք երեխա: